ՀԻՒԱՆԴ ԽՆԱՄԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

ՊԱՏՐՈՅԳ ԵՒ ԳՐԵԽ

Պատրոյգը (ֆիթիլ, suppositoire) փոքրիկ կոնաձև դեղ մըն է, ընդհանրապէս քաքաոյի իւղ (beurre de cacao) կամ կարծրացուած քաղցրիտ (գլիսէրին)։ Ցաճախ պատած կ'ըլլան բարակ թուղթով մը, զոր հանելէ ետք, մէջինը մատին ծայրով սրբանէն բաւական ներս յետսաղիին (rectum) մէջ կը մղեն, ուր կը հալի և կը դիւրացնէ աղիքներու պարպումը։ Այս տեսակ պատրոյգները գրգռիչ չեն։ Երբեմն ալ անոնց մէջ ազդեցիկ դեղեր կը խառնուին (քինին, աֆիոն, և լն.) եթէ հիւանդին վիճակին կամ տարիքին հետևանքով, բժիշկը անյարմար կը դատէ այդ դեղերը բերնէն տալ։

Մեր կողմերը պատրոյգ կը չինէին օճառով, որ շատ գրգռիչ է և երբեմն սրբանի բորբոքում կը պատճառէ։

Գրեխի (հոքնա) գործածութիւնն ալ նպատակ ունի աղիքները պարպել և կը գործէ սրբանէն աղիքին մէջ հեղուկ մը ներարկելով։ Ասիկա երկու ձևով կ'ըլլայ, փոքր գրեխում և մեծ գրեխում։

Փոքր գրեխումը կը կատարուի քաղցրիտով (գլիսէրին) կամ ձէթով, զոր կը ներմուծեն յետսաղիին մէջ տանձաձև ձգախէժէ փոքր դրեխի մը (poire en caoutchouc) միջոցով, բայց քիչիկ քիչիկ, որպէսզի հեղուկը աւելի երկար ժամանակ մնայ աղիքին մէջ։

Մեծ գրեխումը մէկ լիթր կամ՝ ի հարկին՝ աւելի ջուրով առնուած օճառաջուր մըն է, կամ թէ լուծողական (անգլիական աղ կամ սինամիքի sené) պարունակող հասարակ ջուր մը, որ կը տրուի մասնաւոր գործիքի (irrigateur) մը միջոցով։ Այս գործիքը աման մըն է, որ մէկ մեթր երկարութեամբ ձգախէժէ խողովակ մը ունի, որուն ծայրն անցուած է դարձեալ ռակորէ կամ կարծրացուած ձգախէժէ — ոչ թէ ապակիէ, որ վտանգաւոր է, — ծորակաւոր ծայր մը, մուծակ, զոր սրբանէն խորապէս ներս կը մղեն։

Հասարակ գրեխաջուրը գաղջ ըլլալու է, մէկ լիթրէն ոչ աւելի, մէջը պարունակելով քիչ մը հալած օճառ և դգալ մըն ալ քաղցրիտ։

Գրեխի գործածութեան եղանակը հետևեալն է.

Նախ հիւանդին անկողնին մէջ՝ մոմլաթի մը վրայ՝ կը դնեն չորսի ծալուած սաւան մը և հիւանդը վրան կը պառկեցնեն, ընդհանրապէս աջ կողմին վրայ։ Յետոյ գրեխին ծայրի մուծակը վազելինով կ'օծեն, գրեխաջուրը քիչ մը պարապը կը վազցնեն, ծորակը կը գոցեն, և մուծակը սրբանէն ներս կամացուկ մը կը խօթեն։

Նախ պորտին ուղղութեամբ 2-3 հարիւրորդամետր ներս մղելէ ետք, հիւանդին գլխուն ուղղութեամբ բռնելով՝ ամբողջովին յառաջացնելու է զայն:

Այս արարողութենէն ետք, գործիքը՝ ոչ աւելի քան 40-50 հարիւրորդամեդր բարձրութեամբ տեղ մը կը կախեն, ծորակը կէս մը կը բանան և ջուրը ներս կը հոսեցնեն կամաց կամաց, որպէսզի ցաւ չպատճառէ հիւանդին։ Իսկ մերթ ընդ մերթ, երբ ջուրն այլևս չի հոսիր, մուծակը քիչ մը դուրս քաշելու և նորէն մղելու է, մինչև որ յարմար ուղղութիւնը ստանայ և ջուրը հոսի:

Երբ որ՝ ամանին մէջի ջուրը հատնելու վրայ է, մուծակը հանելու է այլևս, օդի մտնելն արգիլելու համար և անմիջապէս հիւանդին տակը տեղաւորելու է կոնք աճոզ (bassin) մը, ապսպրելով որ ներմուծուած ջուրը միջոց մը պահէ ներսը։

Գործողութիւնն աւարտելէ ետք՝ մուծակը գործիքին մէջ զետեղելու չէ; այլ թղթի կտորի մը վրայ դնելէ ետք՝ առատ ջուրով ու օճառով լուալու է, և յետոյ՝ քանի մը վայրկեան եռացնելու է ջուրի մէջ։ Գործիքն ալ ցողուելով պահելու է։

Հաւաքեց՝ Կ. Ց. ԲԱՄՄԱՋԵԱՆ

ԲՈՒԺԱՆՔ ԷՆ

Եթէ զոհ ես՝ բաժանորդագրէ բարեկամներդ,
Եթէ զոհ չես՝ գրէ դիտողութիւններդ։